

ԱՐԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՀ ոստիկանության ԶԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Քննաքնն-Ձեյթունի քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, ոստիկանության կապիտան, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ



ԲԼԱՆԿԵՏԱՅԻՆ ԴԻՍՊՈԶԻՑԻԱՅԻ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածը նախ ներկայացնում է իրավական նորմի կառուցվածքային բաղկացուցիչ տարրերը, իսկ այնուհետև թվարկում և բնութագրում է այդ տարրերից մեկի՝ դիսպոզիցիայի տեսակները: Դուրս չգալով թեմայի շրջանակներից՝ հոդվածում առավելապես շեշտադրվում է բլանկետային դիսպոզիցիան, որի միջոցով արտահայտվում է քրեական իրավունքի և իրավունքի այլ ճյուղերի միջև եղած անխուսափելի կապը՝ մասնավորապես քաղաքացիական, վարչական, հարկային և այլն: Հոդվածում ներկայացվում է քրեական իրավունքի միջճյուղային հարաբերությունները նրա կառուցվածքի տարբեր մակարդակների վրա: Ներկայացվում են նաև բլանկետային դիսպոզիցիայի վերաբերյալ տարբեր քրեագետ տեսաբանների կարծիքներն ու առաջարկները, որի ընթացքում ցույց է տրվում արարքին քրեաիրավական գնահատական տալու ժամանակ երբեմն իրավունքի այլ ճյուղերի կողմից առաջացրած դժվարություններն ու հակասությունները: Բլանկետային դիսպոզիցիաներ ունեցող քրեաիրավական նորմերով սահմանված հանցանքների որակումներ կատարելու հետ կապված՝ հոդվածն անդրադառնում է նաև պրակտիկ աշխատողների շրջանակներում կատարված հարցումների արդյունքներին: Միաժամանակ բերվել են նաև օրինակներ նախկին տարիներին բլանկետային դիսպոզիցիաներով քրեաիրավական նորմերը սխալ մեկնաբանելու և կիրառելու վերաբերյալ:

Հիմնարար բառեր- բլանկետային, դիսպոզիցիա, օրենսդրություն, իրավական նորմ, հղում կատարել, իրավահարաբերություն:

Իրավունքի ընդհանուր տեսության մեջ ընդունված է առանձնացնել իրավունքի նորմի երեք տարր՝ հիպոթեզ, դիսպոզիցիա և սանկցիա: Մակայն քրեաիրավական ոչ մի նորմ բոլոր երեք տարրերի տերմինաբանական նկարագիրը չի բովանդակում (քրեաիրավական ոչ մի նորմ չունի այդպիսի եռանդամ կառուցվածք): Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) ընդհանուր մասի հոդվածներում չկան սանկցիաներ և հաճախ՝ նաև հիպոթեզ: Հատուկ մասի հոդվածները հիպոթեզի հարցը «լռության են մատնել»¹:

Դիսպոզիցիան մատնացույց է անում այն արարքները, որոնք հանցագործություն են ճանաչվում, և որոնք կատարելու համար պատիժ է սահմանվում: Այլ կերպ ասած՝ դիսպոզիցիան քրեաիրավական նորմի այն մասն է, որում նկարագրվում են կոնկրետ հանցագործության հատկանիշները:

Տարբերվում են դիսպոզիցիայի չորս տեսակներ. դրանք են՝ հասարակ դիսպոզիցիա, նկարագրական դիսպոզիցիա, հենվող (վկայակոչող) դիսպոզիցիա և բլանկետային դիսպոզիցիա²:

Բլանկետային դիսպոզիցիայում նկարագրված հանցագործության հատկանիշներն ամբողջությամբ բացահայտելու համար անհրաժեշտ է դիմել իրավունքի այլ ճյուղերի (քաղաքացիական, վարչական, հարկային և այլն) նորմերին, այլ օրենքների կամ ենթաօրենսդրական ակտերի:

ՀՀ գործող քր. օր.-ի վերլուծությունը թույլ է տալիս հաստատել, որ չկա իրավունքի այնպիսի ճյուղ, որի առանձին նորմերը օրգանապես չմտնեն քրեաիրավական նորմերի մեջ: Եվ այդ դեպքերում հանրության համար վտանգավոր արարքների համար պատասխանատվության պայմանները պարունակվում են ոչ միայն քրեական իրավունքի նորմերի մեջ, այլ նաև այլ ճյուղերի:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Բլանկետային դիսպոզիցիաների հիմնական թերությունը այն է, որ նորմատիվ ակտերի շրջանակը, որոնց հղում են կատարում այդ դիսպոզիցիաները, երբեմն շատ ավելի լայն են: Քրեաիրավական դիսպոզիցիաների բլանկետայնության մեծ քանակը միշտ էապես դժվարացնում է հանցագործությունների որակմանն ուղղված դատավորի, քննիչի, դատախազի կամ հետաքննության տեսուչի գործողությունները: Դա կապված է իրավունքի ամենատարբեր ճյուղերի նորմատիվ ակտերին դիմելու անհրաժեշտության հետ, որոնք, ի տարբերություն քրեական օրենսգրքի, հրատարակվում են ամենատարբեր մարմինների կողմից և հսկայական քանակությամբ: Այդ պատճառով մնան հանցագործությունների որակման ժամանակ միշտ չի հաջողվում ճիշտ որոշում գտնել:

Այդ մասին մասնավորապես վկայում են Ն.Ի.Պիկուրովի կողմից ներկայացված տվյալները: Այսպես, Ռուսաստանի Դաշնությունում հարցմանը մասնակցած քննիչներից 22%-ի մոտ որակման ժամանակ հղում կատարելիս ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի իրավական ուժի ստուգման անհրաժեշտություն երբևէ չի առաջացել: 20%-ը համարում է, որ մնան ստուգում անհրաժեշտ է կատարել, սակայն պրակտիկորեն, սովորաբար դա իրենց կողմից չի կատարվում: 47 %-ը հայտարարել է, որ սովորաբար օգտվում են կանոնների, ինստրուկցիաների և մանատիպ ակտերի 5, պատահում է նաև 10 տարվա վաղեմության հրատարակություններից³: Օրենսդրությունում բլանկետային նորմերի օգտագործման պրակտիկան միշտ տոգորված է անորոշության հնարավորությամբ: Ներկայացված հանգամանքները ցույց են տալիս, որ, չնայած բոլոր բացասական կողմերին, որոնք բնորոշ են քրեական իրավունքի բլանկետային դիսպոզիցիային, օբյեկտիվ պատճառներով անհնարին է ամբողջովին խուսափել դրանց կիրառումից, քանի որ բլանկետավորման օգնությամբ ապահովվում է նորմատիվ ակտերի միջև կապերի ամրապնդումը:

Բլանկետային նորմերով նախատեսված հանցակազմերի որակման առանձնահատկությունը նաև այն է, որ պարտադիր կարգով պետք է հղում կատարել այն կոնկրետ իրավական ակտերի վրա, որոնք վկայակոչում են այդ նորմերը: Այսպես, աշխատանքի պաշտպանության կանոնների հանցավոր խախտումների վերաբերյալ դատավճիռ կայացնելիս դատարանը պետք է մատնանշի այդպի-

սի կանոնների կոնկրետ խախտումները՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտերի վրա: Կամ, ասենք, այս կամ այն տեղեկությունների հրապարակումը պետական գաղտնիք հրապարակելու հանցակազմ (ՀՀ քր. օր.-ի 306-րդ հոդված) առաջացնելու պարագան վճռելիս դատարանը հստակ պետք է նշի իրավական ակտի այն կոնկրետ կետը, ըստ որի տվյալ տեղեկությունը հանդիսանում է պետական գաղտնիք (խոսքը վերաբերում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին): Ըստ բլանկետային նորմի՝ որակման ժամանակ ճյուղային օրենսդրության կոնկրետ նորմի մասին նշումի բացակայությունը սխալ է և հանգեցնում է դատավճռի վերացմանը, բեկանմանը:

Դեռևս 1970թ.-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի ճանապարհատրանսպորտային հանցագործությունների որակման մասին որոշումը ձևակերպել է որակման հետևյալ կանոնը. վնաս պատճառելը առանց ՃՏ կանոնների խախտման որակվում է քրեական օրենսգրքի այլ հոդվածներով: Այդպես ՌԴ Պերմի մարզային դատարանի պրեզիդիումի որոշման մեջ նշվում է, որ դատապարտյալ Բ-ն չի կառավարել մեքենան, այլ տուժողների խնդրանքով, նստած լինելով ուղևորի նստատեղում, պտտեցրել է բանալին տաքանալու համար՝ առանց ստուգելու արգելակների դիրքը: Նա չի խախտել ՃԵԿ-ի 8.12 կետը և այդ պատճառով անզգուշության հետևանքով նրա գործողությունը պետք է որակել ոչ թե 264-րդ հոդվածի 2-րդ մասով (Ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ), այլ 109-րդ հոդվածի 1-ին մասով (Անզգուշությամբ մահ պատճառելը): Կամ 2006թ. մարտին ՌԴ Ալթայի շրջանի մարզային դատարանը արդարացրեց Շերբինսկուն, ով 03.02.2006թ.-ին դատապարտվել էր 4 տարի ազատազրկման՝ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու համար, որը առաջացրել էր շրջանի մարզպետ Եվդոկիմովի մահը: Դատապարտվածի օգտին հանդես եկան շուրջ 25.000 վարորդներ երկրի տարբեր մասերից, ինչպես նաև իշխող «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը: Առաջին ատյանի դատարանը ակնհայտորեն խախտել էր որակման կանոնները ՌԴ քրեական օրենսգրքում բլանկետային համարվող 264-րդ հոդվածով որակում կատարելիս, այն է՝ չէր պարզել, թե կոնկրետ ճանա-

www.lawinstitute.am

պարհային որ կանոններն էր խախտել դատապարտյալը, և որոնք՝ Եվդոկիմովի վարորդը: Ի վերջո արդարացնող դատավճիռ կայացվեց հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Քրեական օրենսգրքի բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող հանցագործությունների որակման ժամանակ իրավունքի այլ ճյուղերի դրույթների պարտադիրության աստիճանը սահմանելու հարցը տարբեր դոկտրինալ մեկնաբանողների կողմից որոշվում է տարբեր կերպ: Ոմանք կարծում են, որ հակասությունների դեպքում առաջնությունը պետք է տրվի քրեական օրենսգրքին, մյուսները դրանք համարժեք են համարում: Այսպես, Լ.Վ.Ինոզամովա-Խեգայր գրում է, որ երբ արարքը միաժամանակ խախտում է և՛ քրեական, և՛ վարչական իրավունքի նորմերը, տեղի է ունենում «գուգահեռ իրավախախտում»⁴: Ն.Ն.Պիկուրովը մտան դեպքերում խոսում էր «խառը իրավախախտման» մասին⁵: Ա.Վ.Նաումովը համարում է, որ. «...քրեաիրավական արգելքի փոփոխությունը կարող է տեղի ունենալ առանց, որպես այդպիսին, քրեական օրենքի փոփոխության, այլ իրավունքի այլ ճյուղերի նորմատիվ ակտերի փոփոխությունների հետևանքով»⁶: Կարծում են, որ քրեական օրենսգրքի նորմի ոչ մի «գուգահեռ» կամ «խառը» իրավախախտում, որոնցով միայն իրականացվում է հանցագործությունների որակումը, գոյություն չունի: Քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասը շատ պարզ սահմանում է. «Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված, հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով»: Բացառապես քրեական օրենսգրքը սահմանում է. «... ՀՀ քրեական օրենսգրքն ամրագրում է քրեական պատասխանատվության հիմքն ու քրեական օրենսդրության սկզբունքները, որոշում, թե հանրության համար վտանգավոր որ արարքներն են համարվում հանցագործություններ, և սահմանում է պատժի տեսակներ ու քրեաիրավական ներգործության այլ միջոցներ դրանք կատարելու համար» (ՀՀ քր. օր.-ի 2-րդ հոդվածի 2-րդ կետ):

Ինչ վերաբերում է բլանկետային նորմերում քրեաիրավական արգելքի փոփոխություններին, ապա փոփոխվում է նրա այն մասը, որը հղում է կատարում օրենսդրության այլ նորմերին, մասնավորապես առարկային (զենք, հոգեմետ նյութեր) կամ անվտանգության կանոններին հղում կատա-

րելիս: Առանձին դեպքերում նրանք իրականում կարող են հանգեցնել ապաքրեականացմանը: Օրինակ, եթե այս կամ այն զենքը համապատասխան օրենսդրությամբ դադարել է համարվել արգելված, ուրեմն ՀՀ քր. օր.-ի 235-րդ հոդվածի այդ մասը կապաքրեականացվի: Նման իրավիճակ է տեղի ունենում նաև հանցակազմի բլանկետային հատկանիշի քրեականացման դեպքում՝ հաշվի առնելով քրեական օրենքի հետադարձ ուժի մասին քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթները:

Քրեական օրենսգրքի հետագա կատարելագործման համար ցանկալի է օրենսգրքի բոլոր բլանկետային հոդվածներին տալ միասնական ձևակերպում՝ «ապօրինի» տերմինը: Դա թույլ կտա որակման համար ընտրել միայն օրենքները, այլ ոչ թե ենթաօրենսդրական ակտերը:

Օրենսդրին չէր խանգարի առավել հստակ նշել բլանկետային քրեաիրավական նորմերի շրջանակը և համապատասխան հատկանիշների բլանկետավորման աստիճանը: Օրինակ, նորմի փոփոխումը ամբողջովին բլանկետայինից կիսաբլանկետայինի: Կիսաբլանկետային դառնալիս առավելագույնս նվազեցնել բլանկետայնությունը, երբ բլանկետայնության հիմնական հատկանիշները պարզաբանվում են քրեական օրենսգրքում, իսկ ավելի կոնկրետացվում են իրավունքի այլ ճյուղերի նորմերում: Դա հաջողությամբ կատարված է 2003թ.-ի քրեական օրենսգրքում, օրինակ, առողջությանը պատճառված վնասը սահմանելու ժամանակ՝ տարանջատելով առողջությանը վնաս պատճառելը ծեծից և խոշտանգումներից: 1961թ.-ի ՀԽՍՀ քրեական օրենսգրքում առողջության ծանր, միջին և թեթև վնասի մասին նորմերն ամբողջովին բլանկետային էին, հղում էին դատաբժշկական ենթաօրենսդրական ակտերին: Այժմ առողջության վնասի հիմնական հատկանիշները նշված են քրեական օրենսգրքի հոդվածներում: Այդպես, ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածը առողջության ծանր վնաս է համարում վնասը, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում:

Նշված դիսպոզիցիայում այլընտրանքայնորեն ներկայացված են կոնկրետ հատկանիշներ. դրանք են՝ հղիության ընդհատում, տեսողության կորուստ, թմրամոլություն և այլն, գնահատվող՝ դեմքի անջնջելի այլանդակում, և կիսաբլանկետային՝ ընդհանուր աշխատունակության կորուստ՝ ոչ պակաս, քան մեկ երրորդով: Վերջին հատկանիշը ճշտելու համար նշանակվում է դատաբժշկական փորձաքննություն, որը որոշում է ընդհանուր և հատուկ աշխատունակության կորստի աստիճանը: Նախկինում դատարանները փորձաքննության օբյեկտիվությունը գնահատելու հնարավորություն ունեին: Գործում էին «մարմնական վնասվածքների ծանրության աստիճանը սահմանելու դատաբժշկական կանոններ», որոնք հաստատված էին ԽՍՀՄ առողջապահության նախարարության 11.12.1978թ. հրամանով: Իհարկե, նախարարության հրամանը չի կարող հանդիսանալ ճյուղային օրենսդրության աղբյուր, այդ պատճառով դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններում այդ կանոններին հղում չի կատարվում, չնայած դե ֆակտո նրանցով ղեկավարվում են: ՀՀ քր. օր.-ը գործում է շուրջ 10 տարի, նորմերի զգալի մասը վերաբերում է առողջության դեմ ուղղված հանցագործություններին, սակայն աշխատունակության կորստի աստիճանը սահմանելու կանոնների վերաբերյալ օրենսդրություն Ազգային ժողովի կողմից դեռևս չի ընդունվել: Գժվար չէ հասկանալ, որ այդպիսի բացերը Հայաստանի օրենսդրությունում ունեն լեզալ կրիմինոգեն բնույթ կոռուպցիայի և որակման սխալների համար: Ինքնին հիմնական օրենսդրությունը երբեմն այնքան հակասական և հնացած է, որ հանգեցնում է ոչ միայն սխալ որակմանը, այլ նաև հանցակազմի բացակայությամբ արդարացնող դատավճիռներ կայացնելուն:

Քրեական իրավունքի տեսության և պրակտիկայի հիմնախնդիրներից մեկը հանդիսանում է նշված իրավական ճյուղի իրական ամբողջական փոխհարաբերության լրիվ ապահովումը այլ ճյուղային պատկանելիության նորմանտիվ նյութի հետ:

Գործող քրեական օրենսդրության ուշադիր

վերլուծությունը ցույց է տալիս, որ քրեական իրավունքի միջճյուղային հարաբերությունները իրականացվում են նրա կառուցվածքի տարբեր մակարդակների վրա: Մասնավորապես ակնհայտ են դրանցից հետևյալները.

1. Քրեական իրավունքի նորմատիվ դրույթը կապված է իրավունքի այլ ճյուղի նորմատիվ դրույթի հետ (որպես օրինակ կարելի է բերել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածը, որը պատասխանատվություն է սահմանում զինծառայողին վիրավորելու համար, որի կիրառումը պարտադիր հղում է պահանջում «Ձինվորական ծառայության անցնելու մասին» 2002թ.-ի ՀՀ օրենքին:

2. Քրեական իրավունքի դրույթը կապված է այլ ճյուղային պատկանելիության ինստիտուտի կամ ենթաինստիտուտի հետ (նման իրավիճակը տեղ է գտնում ՀՀ քր. օր.-ի 156-րդ հոդվածում, որը պատասխանատվություն է նախատեսում հղի կնոջը կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձին աշխատանքի ընդունելուց անհիմն հրաժարվելու կամ աշխատանքից անհիմն ազատելու համար: Այստեղ քրեական իրավունքի դրույթի կապ է հայտնաբերվում մի ամբողջ ենթաինստիտուտի հետ, որը կարգավորում է հղի և երեխա ունեցող կանանց աշխատանքի առանձնահատկությունները):

3. Քրեական իրավունքի ենթաինստիտուտը կամ ինստիտուտը կապված է իրավունքի այլ ճյուղի դրույթի հետ (այստեղ օրինակ կարող է ծառայել ՀՀ քր. օր.-ի 21-րդ գլխում սահմանված սեփականության դեմ ուղղված հանցագործությունների համար նախատեսված պատասխանատվության նորմերի ինստիտուտը, որի դրույթները սեղմ փոխկապակցված են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի նորմատիվ դրույթների հետ, մասնավորապես նշված օրենսգրքի 53-րդ հոդվածի հետ, որը սահմանում է մանր չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու վերաբերյալ դրույթները):

4. Քրեական իրավունքի ենթաինստիտուտը կամ ինստիտուտը կապված է իրավունքի այլ ճյուղի ենթաինստիտուտի կամ ինստիտուտի հետ (իրավիճակը կարող են ներկայացնել ՀՀ քր. օր.-ի 169-րդ հոդվածի դրույթները, այն է՝ որդեգրման գաղտնիքը հրապարակելը կամ որդեգրման համաձայնություն տալուն հակելը կամ հարկադրելը, որոնք կազմում են երեխայի շահերի դեմ ուղղված

հանցագործությունների համար նախատեսված պատասխանատվության մասին նորմերի ենթաինստիտուտը, որը փոխկապակցված է ընտանեկան իրավունքի որդեգրման ինստիտուտը կազմող դրույթների հետ):

Սովետական գրականության մեջ դիրքորոշում է տիրում, որի համաձայն միջճյուղային փոխհարաբերությունները պատկանում են միայն քրեական իրավունքի հատուկ մասի նորմերին և ինստիտուտներին, իսկ նրանց արտացոլման միակ ձևն է հանդես գալիս բլանկետային դիսպոզիցիան: Այդպես, օրինակ, Ն.Ի.Պիկուրովը գրում է, որ միջճյուղային հարաբերությունների առկայությունը տարբեր ճյուղային պատկանելիության նորմատիվ նյութերի ուսումնասիրության անհրաժեշտություն է թելադրում, որը քրեական իրավունքում օգտագործվում է քրեական պատասխանատվության հիմքերի ձևակերպման համար ⁷:

Բլանկետայությունը բավականին բարդ հասկացություն է: Սույն աշխատության շրջանակներում հայտնենք մեր համաձայնությունն այն հետազոտողների հետ, ովքեր՝

ա) ընդունում են բլանկետայությունը որպես քրեական օրենքի հոդվածի դիսպոզիցիայի բնութագրում, այլ ոչ թե նորմի դիսպոզիցիայի, ընդհանուր նորմի կամ հանցակազմի,

բ) տարբերակում են օրենքում բլանկետայության դրսևորման 2 հիմնական տարբերակ՝ բլանկետային հատկանիշ (օրենքում այլ ճյուղերի հասկացությունների օգտագործումը) և բլանկետային դիսպոզիցիա (նորմի ձևավորումը անձի կողմից այս կամ այն այլճյուղային կանոնները խախտելուն հղում կատարելու միջոցով) ⁸:

Ամփոփելով շարադրանքը՝ հարկ ենք համարում ընդգծել, որ բլանկետային նորմերի օրինական կարգավիճակը ապահովելու նպատակով, դրանց հիմնավորումը միայն օրենքներով, այլ ոչ այլ նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև նախաքննության և դատական պրակտիկայում դրանց կիրառման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է նախ չՉ քր. օր.-ում նախատեսել, որ այն հիմնվում է ոչ միայն չՉ Սահմանադրության վրա, այլ նաև չՉ ուրիշ օրենքների վրա, որոնց վրա հղումներ են կատարվում սույն քրեական օրենսգրքում, երկրորդ՝ չՉ քր. օր.-ում ամրապնդել դրույթ, որի համաձայն՝ սույն քրեական օրենսգրքի բլանկետային նորմերում թույլատրվում է հղումներ կատարել միայն օրենքների վրա, այլ ոչ թե այլ նորմատիվ իրավական ակտերի վրա, երրորդ՝ կոնկրետացնել, որ չՉ քր. օր.-ը հիմնվում է ոչ թե միջազգային իրավունքի յուրաքանչյուր ընդունված սկզբունքի և նորմի վրա, այլ միայն նրանց, որոնք նախատեսված են չՉ միջազգային պայմանագրերով, և չորրորդ՝ անհրաժեշտ է սահմանել դրույթ, ըստ որի՝ օրենքների տեքստերը, որոնց վրա հղում է կատարվում չՉ քր. օր.-ի բլանկետային նորմերում, կամ նրանցից անհրաժեշտ հատվածները համարվում են սույն Օրենսգրքի պարտադիր հավելվածներ, և այդ հավելվածներում օրենքների փոփոխությունների և լրացումների ժամանակ կատարվում են համապատասխան ուղղումներ (ճշտումներ):

¹ Տե՛ս Գրիգորյան Մ. «Քրեական իրավունք. ընդհանուր մաս» Երևան 2003թ. էջ 43:

² Տե՛ս Քրեական օրենսգրքում հանդիպում են նաև դիսպոզիցիայի խառը տեսակներ:

³ Տե՛ս Пикуров Н.И. Комментарий к судебной практике квалификации преступлений на примере норм с бланкетными диспозициями. М.: Изд-во Юрайт, 2009. С. 59.

⁴ Տե՛ս Иногамова-Хегай Л.В. Квалификация преступлений при конкуренции уголовно-правовых и иных норм права // Уголовное право: стратегия развития в XXI веке. М., 2004. С. 128.

⁵ Տե՛ս Շմ.: Пикуров Н.И. Квалификация преступлений со смешанной противоправностью. Волгоград, 1987, С. 48.

⁶ Տե՛ս Наумов А.В. Российское уголовное право: Курс лекций. Общая часть. М., 2004. Т. 1. С. 249.

⁷ Տե՛ս Пикуров Н.И. К вопросу о границах системы уголовного права // Системность в уголовном праве: Материалы II Российского конгресса уголовного права, состоявшегося 31 мая - 1 июня 2007г. М., 2007. С. 317.

⁸ Տե՛ս Дурманов Н.Д. Советский уголовный закон. М., 1967, С. 46; Пикуров Н.И. Квалификация преступлений при бланкетной форме диспозиции уголовного закона (с конкретизацией запрета в административном праве): Дис. ...

канд. юрид. наук. М., 1982. С. 37; Наумов А.В. Нормы иных отраслей права как источник уголовного права // Законность. 2002. N 7, С. 38-39; Ибрагимов М.А., Ображиев К.В. Нормативные акты иных отраслей права как источники уголовного права. Ставрополь, 2005. С.16-22.

Арам Айвазян

Старший следователь по особо важным делам следственного отдела Канакер-Зейтун следственного управления г. Еревана главного следственного управления полиции РА, капитан полиции, соискатель кафедры уголовного права и процесса института права и политики Российско-Армянского (Славянского) университета

РЕЗЮМЕ

Понятие и особенности бланкетной диспозиции

В статье представлены структурные элементы правовой нормы, а затем перечислены и характеризованы виды одного из этих элементов: диспозиции. Не выходя из рамок темы, в статье больший акцент сделан на бланкетной диспозиции, посредством которой проявляется неизбежная связь уголовного права и других отраслей права, в частности, гражданского, административного, налогового и т.д. В статье представлены межотраслевые связи уголовного права на разных уровнях его структуры. Также представлены мнения и предложения различных теоретиков-криминологов о бланкетной диспозиции, где показаны трудности и противоречия, вызванные другими отраслями права при квалификации деяния. В статье также уделяется внимание результатам опросов практических работников о квалификации деяний, предусмотренных бланкетными уголовно-правовыми нормами. Также в статье приведены примеры неверного толкования и применения бланкетных уголовно-правовых норм.

Ключевые слова: бланкетный, диспозиция, законодательство, правовая норма, ссылаются, правоотношение.

Aram Ayvazyan

An applicant of the Criminal Law and Legal Proceedings
Chair of the Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY

Notion and peculiarities of blanket disposition

First of all the article presents the structural elements of the legal norm, then it enumerates and describes the types of disposition, being one of these elements.

Staying within the framework of the topic the article mainly stresses the blanket disposition, through which an inevitable connection between the criminal law and other branches of the law is expressed, in particular, civil, administrative, tax and other. The inter-branch relations of the criminal law on different levels of its structure are presented in the article.

The opinions and proposals of different criminalists about the blanket disposition are also presented, during which contradictions and difficulties raised by other branches of the law are shown while giving an external criminal-legal assessment.

In connection with the qualification of the crimes set by the criminal-legal norms having blanket dispositions the article also speaks about the results of the public opinion polls conducted among the practice employees. At the same time, the examples were also brought about wrong commenting and applying the criminal-legal norms with blanket dispositions during the previous years.

Keyword: blanket, disposition, legislation, legal norm, to link, legal relation.